ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
0002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 02 62, ֆաքս 53 88 42
ombuds@ombuds.am, www.pashtpan.am

№ 01/14.1/3461-16

«30» 12 2016թ.

Փաստաբան Մուշեղ Շուշանյանին

Հասցե՝ ք. Երևան, Մառի փողոց, 5 շենք, բն. 44

Հարգելի՛ պարոն Շուշանյան,

Ձեզ է ուղարկվում Ձեր բողոքը քննարկման ընդունելու մասին որոշման օրինակը:

Առդիր՝ որոշումը՝ 2 (երկու) թերթից:

Հարգանքով՝

Ա. Թաթոյան

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի
Կանխարգելման վարչություն
Կատ.՝ Ա. Ներսիսյան
Հեռ.՝ 53-88-31

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

01/14.1/3461-16

բողոքը քննարկման ընդունելու մասին

28.12.2016թ. ք. Երևան

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձ Արթուր Սամվելի Սողոմոնյանը և նրա պաշտպան Մուշեղ Շուշանյանը 2016 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով տեղեկացրել են, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ոտնահարվում են Ա. Սողոմոնյանի իրավունքները:

Ա. Սողոմոնյանի պաշտպանը դիմումում նշել է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելուց մոտ 10 օր անց իր պաշտպանյալի մոտ սկսվել և մինչ դիմումը ներկայացնելու օրը շարունակվում է թարախակալման գործընթաց, որը ուղեկցվում է մարմնի թարախակալված մասերի ցավերով, մասնավորապես՝ ուժգին գլխացավերով, նաև մազաթափությամբ:

Մ. Շուշանյանը դիմումում նշել է նաև, որ առողջական խնդրի առաջանալուց հետո՝ ավելի քան երեք ամիսների ընթացքում, Ա. Սողոմոնյանը բազմիցս դիմել է իրեն բժշկական օգնություն տրամադրելու նպատակով, սակայն որևէ բուժօգնություն նրան չի տրամադրվել, ինչպես նաև բժիշկ և բուժաշխատող նրան տևական ժամանակ չի այցելել: Մեկ անգամ նրան այցելել է բուժակ, լսել է գանգատները, սակայն հայտնել է, որ ոչնչով չի կարող օգնել:

Մ. Շուշանյանը դիմումով նաև հայտնել է, որ քննության նպատակով Ա. Սողոմոնյանը ենթարկվել է արյան հետազոտության, սակայն արդյունքների մասին չի տեղեկացվել, ինչպես նաև մեկ անգամ հանդիպել է բժշկին, ով հայտնել է, որ դեղեր կնշանակի, սակայն որևէ դեղորայք չի տրամադրվել:

Մ. Շուշանյանը դիմումով խնդրել է Ա. Սողոմոնյանի մոտ առկա առողջական խնդիրն ախտորոշել և բուժում նշանակելու նպատակով կազմակերպել նրա անհապաղ հետազոտումը:

Բացի դրանից, Մ. Շուշանյանը 2016 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հեռախոսազանգի միջոցով նաև խնդրել

է միջոցներ ձեռնարկել Ա. Սողոմոնյանին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի բուժմաս համապատասխան բուժօգնություն կազմակերպելու համար տեղափոխելու հարցը՝ հաշվի առնելով վերջինիս առողջական ծանր վիճակը:

Սույն թվականի դեկտեմբերի 13-ին Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ, հանդիպել այնտեղ պահվող կալանավորված անձ Ա. Սողոմոնյանին, առանձնազրույց ունեցել վերջինիս հետ, ինչպես նաև ուսումնասիրել են նրա բժշկական քարտը:

Բժշկական քարտի ուսումնասիրությունից պարզվել է, որ կալանավորված անձին այցելել է բժիշկ-մաշկաբանը, ով զննության արդյունքում համապատասխան բուժում է նշանակել: Միաժամանակ, բժշկական քարտի համաձայն վերջինս հրաժարվել է նշանակված բուժումից, սակայն բժիշկը նշել է, որ ամենօրյա համայցերի ընթացքում պետք է ճշտել հիվանդից նրա բուժում ստանալու ցանկության մասին:

Ա. Սողոմոնյանի հետ առանձնազրույցի ընթացքում վերջինս նշել է, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում իրեն համապատասխան բուժօգնություն չի տրամադրվում: Հայտնել է նաև, որ բուժում ստանալու նպատակով ցանկանում է տեղափոխվել քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման ստացիոնար կամ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ: Իսկ նշանակված բուժումից հրաժարվել է՝ մինչ իր փաստաբանի հետ խորհրդակցելը:

Նկատի ունենալով, որ դիմումը համապատասխանում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջներին, ղեկավարվելով նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Արթուր Սողոմոնյանի և նրա պաշտպան Մուշեղ Շուշանյանի բողոքն ընդունել քննարկման և դրա ուսումնասիրումը հանձնարարել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետի տեղակալ Ա. Ներսիսյանին:

2. Որոշման օրինակն ուղարկել դիմումատուին:

Ա. ԹԱԹՈՅԱՆ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
0002, Երևան, Պուշկինի փողոց 56ա

0079

ք. Երևան, Մեսրոպ փողոց, 5 շենք, բն. 44

արտաքսումներ Մուտք Ուղևորներից

09 JAN 2017
A
0379
10 JAN 2017
P